ԿԻՐԱԿԷ 9 ՕԳՈՍՏՈՍԻ 1881—№ 156

№ 156 – ԿԻՐԱԿԷ 9 ՕԳՈՍՏՈՍԻ 1881

Հրատարակւում է ամեն օր բացի երկուշաբթի և տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Ստորագրագրացիք դիմում են ուղղակի խմբագրութեան համաձայն հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).

Խմբագրութեան ուղղած թէ՛ յօդուածները և թէ՛ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները և պահում է երկու ամիս մինչև ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։
Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը և պ. Ճանփոլադեանի պավիլիոնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Ազգային.—Թղթակցութիւնք Մոսկուայից և Կ. Պօլսից։
Քաղաքական.—Ֆրանսիա.— Քաղաքական լուրեր։
Մեղուի հեռագիր։
Մանր լուրեր։
Խառն լուրեր։

ԱԶԳԱՅԻՆ

ՄՈՍԿՎԱ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Ահա մի քանի խօսք Լազարեան ճեմարանի աշակերտների դրութեան մասին, այն աշակերտների, որոնք ամառը մնացած են ճեմարանում։ Քննութիւններից յետոյ կարողութիւն ունեցող աշակերտները գնացին իւրեանց հայրենիքը, մնացին գլխաւորապէս աղքատ ծնողների որդիք։ Ամառը մնացած աշակերտների թիւը հասնում է մօտ 50, սորանք համարեա բոլորեքեան հայեր են։ Քննութիւնները վերջանալուց յետոյ սորանց դասատուներից սեղանատուն քշեցին, ուր պէտք է գտնուին ամբողջ ամառ։ Սեղանատունը Լազարեան ճեմարանի ամենացած յարկումն է, դա ներկայացնում է մի երկայն սենեակ, որ ունի հինգ բաժանմունք. սեղանատան մէկ կողմում դրած են գրասեղաններ աշակերտաց պարապելու համար, միւս կողմում երկայն սեղաններ, ուր աշակերտները կերակուր են ընդունում։ Սեղանատան առաստաղը շատ ցած է, խոնաւութիւնը տիրում է ամբողջ սեղանատան մէջ, այնպէս որ պատերը խոնաւութիւնից իւրեանց գոյնը բոլորովին փոխել են։ Երկաթի կազմուածք պէտք է ունենայ մարդ, որ կարողանայ այսպիսի մի տեղ առանց հիւանդանալու ամառուայ օրերը անցկացնել։ Այս տեսնում է տեսչութիւնը, բայց հոգս քաշել աշակերտների վերայ չէ ուզում, նա ասում է թէ ուրիշ տեղ տեղաւորել աշակերտներին չէ կարելի, որովհետև դասատուները և այլ ուրիշ տեղեր պէտք է ամառը նորոգվէին և ներկուէին։

Կից սեղանատանին տարածվում է մի փոքր քառանկիւնի պարտէզ, որի մէջ եթէ մէկ մարդ կամենայ պատսպարուել արևից, ձմեռուան եմ ասում, այդպիսի մի տեղ չէ կարող գտնել, որովհետև պարտիզում շատ քիչ ծառեր կան, եղածն էլ թփերի նման բաներ են և չեն կարող ստուեր տարածել։ Այժմ ճշմարիտ է, որ այս ամառ մի քանի նոր ծառեր են տնկել, բայց մինչև որ դոքա մեծանան և ստուեր տարածեն՝ այժմեայ աշակերտները վաղուց մոռացած կը լինին ճեմարանը։ Մի քանի ծաղիկներ էլ շարել են պարտիզում, բայց միայն գեղեցկութեան համար, որովհետև մօտակայ ցանկի յետևից այնպիսի գարշելի հոտ է փչում, որ պարտիզի մէկ կողմում մարդ չէ կարող մնալ։ Աւելի լաւ կը լինէր, ես կարծում եմ, որ քան թէ ծաղիկներ են տնկում, օդը մաքրէին։ Պարտիզում ոչ մի խաղալիք չը կայ աշակերտների համար, որով կարող էին զբաղուած լինել, նամանաւանդ փոքր աշակերտները և ահա այսպիսի մի տեղ պէտք է ճեմեն և խաղան աշակերտները ամբողջ ամառ, որովհետև ոչ մէկին քաղաք դուրս գալ չեն թողնում։ Շաբաթը երկու անգամ գալիս է մարմնամարզութեան վարժապետը և երկու անգամ նկարչութեան, մէկ մէկ ժամ պարապելուց յետոյ արձակում են աշակերտներին։ Աշակերտներին միայն մի քանի ռուսերէն գրքեր են տալիս կարդալու, հայերէն ոչ մի հատ։

Պէտք է ասել, որ աշակերտները մի քանի տարի առաջ փող էին հաւաքում իւրեանց մէջ (հայերը) և հաւաքած գումարով մի փոքր մատենադարան էին կազմել հայերէն գրքերի, բայց դժբաղդաբար դորանից էլ զրկուեցան, որովհետև տեսուչը խլեց դոցանից գրքերը և ահա երկու տարի է որ հայ աշակերտները խնդրում են հայերէն գրքերը, բայց նա կարդալու էլ չէ տալիս ոչ մի գիրք և ահա մի այսպիսի ազգային ճեմարանի մէջ հայ որդիքը չունին հայոց մատենադարան։ Այս կողմից աշակերտները շատ շնորհակալ են, որ նորանց վարժապետը ամառուայ համար մի քանի ընտիր գրքեր թողեց հայերէն լեզուով կարդալու։ Թողնենք այս. մինչև այժմ ամենայն տարի օրը երկու անգամ էին տանում լողանալու, իսկ այս ամառ միայն առաւօտները։ Չորս տարի է, որ ամառանոց չեն տանում, թէ ինչ պատճառով՝ չեմ իմանում։ Կերակրում են համարեա միևնոյն տեսակ, ինչպէս և ձմեռը, այն է զանազանութիւնը, որ շաբաթը երկու, երեք անգամ կաթ են տալիս, որի կէսը ջուր է լինում։ Այս ես արժանի է ուշադրութեան։ Եթէ մի որպիսի և իցէ աշակերտ ստանում է իւր տանից փող այս և այն հաճոյքի համար, այդ փողը նախառաջ տեսչութեան ձեռքն է ընկնում, եթէ աշակերտը կոտրել է մի անօթ, փչացրել է այս և այն իրը, կորցրել է գիրք, ստացած փողից հանում են արժէքը, այդ բաւական չէ, նորանք կրկին և կրկին փող են պլոկում աշակերտներից։ Նոյնը անում էին այն աշակերտների հետ, որոնք տուն էին գնում։

Ահա թէ ինչ պատահեցաւ այս տարի. աշակերտներից մէկը պէտք է տուն գնար, նորան չէին թողնում, մինչև որ փող չը վճարէր (8 ռ.), բայց նորան ուղարկել էին միայն ճանապարհի ծախսի համար փող, աշակերտը խնդրում էր, որ նորան տուն թողնեն, խոստանալով որ ինչպէս տուն հասնի՝ 8 ռ. կ'ուղարկի տեսչութեան։ Այս պայմանով էլ մինչև անգամ չը թողեցին նորան, աշակերտը պարտաւորուած էր ուրիշից 8 ռ. պարտք առնել։

Ասացէք խնդրեմ, ինչ կը նշանակէ պլոկել աշակերտների ձեռքից փող, երբ որ ուղարկում են նոցա ծնողները մի փոքր գումար ճանապարհի կամ մանր ծախսի համար։ Բայց հարցնող չը կայ, թէ արդեօք ուր են գնում աշակերտների փողերը։

X.

Կ. ՊՕԼԻՍ...

10 յուլիսի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Մեծապատիւ խմբագիր. Թէպէտ Կ. Պօլիսէն ձեզի հաղորդելու խիստ շատ լուրեր կան, սակայն անկարող լինելով յանձն առնել մի մշտական և օրինաւոր թղթակցութեան պաշտօն, կը թողում որ այլք կատարեն այդպիսի մի նուիրական գործ, և ես միայն այս անգամ սոյն կարճառօտ գրութեամբ կը գամ ձեր և բոլոր ռուսահայ եղբարց ուշադրութիւնը խնդրել յետագայ հետաքրքրական հանգամանաց վերայ «Մշակ» լրագրի նկատմամբ։

Երբեմն ձեռքերնիս հանելով յիշեալ լրագրի թիւերն զարմանօք կը կարդանք նորա պարունակութիւններն և զանազան կարծիքներն թրքահայոց վերաբերմամբ, մէկ կողմէն նոյն իսկ «Մշակի» պ. խմբագրի կողմանէ, միւս կողմէն պ. Գրիգոր Նիկողոսեանի, և երրորդ պ. Հայկակի կողմանէ։ Ով է այդ պ. Հայկակ, որ անծանօթ է մեզ, և անծանօթ միանգամայն մեր սիրելի ռուսահայ եղբարց, և որ չ'ուզեր յայտնել զինքն իւր սեպհական անուամբ։ Զարմանալի չէ միթէ որ ամենայնի անծանօթ մի Հայկակ, որ երբ վաղօր պատուիրակ բոլոր թրքահայոց կողմանէ խօսելէ զատ, չը գիտենք ալ թէ նա ունի՞ տեղւոյս ոևէ մի ընկերութեան հետ, մի ոևէ մասնակցութիւն և եթէ ունի՝ այն ալ արդեօք ազգի կամ հայրենեաց օգուտ մը բերելու համար է։ Այսուամենայնիւ այդ վարագուրեալ Հայկակի ով լինելն այնքան հետաքրքրական չը պիտի լինէր մեզ, եթէ «Մշակ» լրագրի մէջ չը տեսնէինք այդչափ պատգամներ որոնցմէ մէկը յատկապէս Տփղիսէն գալով և այստեղ բնակելովն հանդերձ անկարող գտնուեցաւ աստ մի առանձին և որոշ դիրք տալու «Մշակի» ազդեցութեան։ Ինչ և է նպատակնիս այս չէ, այլ կը փափագինք իմանալ թէ ինքնավստահ «Մշակը»՝ այդքան տքնութեամբ ուղղութիւն և պատգամներ տալովը Տփղիսէն մինչև աստ՝ ինչ կարծիք ունի մեզ նկատմամբ, որ այնքան դիւրամթեք և տրամադիր կը կարծէ զմեզ ամեն հակասական և անհեթեթ մտքերու ու խորհուրդներու ընդունելու մասին։ Մէկ կողմէ «Մշակի» խմբագիր պ. Գրիգոր Արծրունին ամիսը անգամ մը փոխելով իւր խօսքերն ու սկզբունքներն՝ երբեմն համակարծիք կը գտնուի Կ. Պօլսոյ գործող մարմնոյ ուղղութեանն, և երբեմն ալ Հայաստանի մէջ արհեստներ ծաւալելու նկատմամբ գործնական միջոցներ յանձնարարելով նորանոր պատգամներ կ'որոտայ անոնց։ Այս օրինակ հակասական մի ընթացք կարծես քիչ է «Մշակ» լրագրի ինքնավստահութիւնը մեր տեսութեանց առջև ծիծաղելի ընելու համար, նորա երկու թղթակից օգնականներն ալ կը յարատևին չարունակ զիրեար հակասել. մին ի նոցանէ իւր ներկայ ուղղութեամբ չ'ուզեր տեսնել մեր մէջ ոևէ գովելի և խրախուսելի առարկայ, որոյ համար արհեստ ու մշակութեանց ձեռնարկել կը սորվեցնէ Հայաստանի մէջ. իսկ միւսը իւր դեռատի հասակովն մեր բոլոր գործող մարմինները Ամերիկայի կանոնաւորութեան ու խոհականութեան մէջ նկարագրին իրեն փառք կը համարէ, վախնալով միայն պակասորդն լրացնելու համար կը հրաւիրէ ռուսահայ եղբարս, որպէս զի դրամական օժանդակութեամբ ու օգնականութեամբ դիւրացնեն փայլուն ապագայի, լուսապայծառ ապառնիի, դափնեայ անթարշամ պսակաց ու անմահ յիշատակաց արժանի, անձնուէր, անձնազոհ ու անձնահատուկ ազգասէր բարերար ու մեկենասներու դիւցազնական չքնաղ և անօրինակ գործառնութիւններն !!!։

Զարմանալի կէտը սա է թէ՝ արդեօք մենք այնքան կարճատես և այնքան յիմար կ'երևանք «Մշակ» լրագրի խմբագրութեան քով, որ չենք հարցներ իրեն թէ՝ երբ ձեր սեպհական լրագրի մէջ, մտքի ու սկզբան ուղղութեան մէջ քաօս կը տիրէ, հապա ինչպէս կրնաք կարծել թէ ձեր լրագիրը կարող և հաստուն մի թերթ կը համարենք մեր առօրեայ շահերն ղեկավարելու համար։

Տէր խմբագիր, «Մշակ» լրագրի աշխատակից պ. Գրիգոր Նիկողոսեանի հոս գալէն ի վեր մենք արդէն բաւականէն շատ աւելի անտեղի ու անվայել նախատինք ու լուտանք կերանք անկէ, շատ անգամ դիտմամբ լռութիւն պահելով հիւրընկալութեան պարտուց դէմ չը մեղանչելու համար։ Սակայն այս անգամ չ'ուզեցինք, կամ թէ լաւ է ասել չը կարողացանք լուռ մնալ «Մշակ» լրագրոյ խմբագրութեան ընդհանուր ուղղութեան մասին, որ երեք մարդ՝ երեք տարբեր գաղափարներով, ու մէկզմէկ չը հասկանալով ու չը ճանաչելով կ'ուզեն որ մեզի շատ բան հասկըցունեն։

Ուստի աւելի լաւ կը լինէր զմեզ դաստիարակելէ առաջ նախ այդ երեք անձինք և մի «Մշակ» կարծեաց համաձայնութիւն գոյացնէին իւրեանց մէջ և զիրեար լաւ մը սերտելէ ու հասկանալէ յետէ ելնէին խօսել մեզի հետ ինչպէս որ արժանն է։

Յ. Յովհէեանց.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ.

Ֆրանսիայում ամենի աչքերը դարձել էին դէպի Տուր քաղաքը, որտեղ Գամբէտտան ինչպէս իշխան ընդունուեցաւ։ Էքս-դիկտատորի նըպատակի համար շատ յարմար է այդ տեղը Թիէրի հասարակապետութիւնը հիմքից քանդելու և դորա տեղը արմատական ժողովրդապետութիւն դնելու համար։ Այդ պատճառով էլ Գամբէտտայի առաջին խօսքը Տուրում հաշուած էր այնպէս, որ կարելի լինէր բոլոր շովինիստականին զգացմունքը արթնացնել և իր անձնական ընդդիմութեան նպատակներին ծառայեցնել: 1870-ի ազգային ցաւը յիշելով՝ դրա դէմ դրաւ յաղթող հասարակապետութեան նոր շրջանը: Հանդիսաւոր հացկերոյթի ժամանակ աւելի երևեցան նրա ձգտումները դէպի այդ: Գամբէտտան գովաբանեց վերջին տասը տարին, որոնք Ֆրանսիայի ելևմուտից և պատերազմական մեծութիւնը, հասարակապետութեան դրօշակի տակ, վերականգնեցին, թագաւորական կուսակցութեան յաղթեցին և այնպիսի ժամանակներ առաջացրեցին, երբ հասարակապետութիւնը իւր վաղուց յայտնած խոստումները կարող է իրագործել, այսինքն ընտրական ազատութիւնները գլուխ բերել, նոյնպէս կատարեալ ազատութիւն տալ քաղաքական բաներում և անարգել յառաջադիմութեան: Վերջը Գամբէտտան սկսաւ յարձակվել ծերակոյտի վերայ, որը մերժել է դպրոցի աշխարհականացնելը: Նա յայտնեց իրեն իբրև բարեկամ երկու օրէնսդիր ժողովի կարգին, բայց միայն այն պայմանով, որ այդ երկու ժողովներն էլ միևնոյն հոգւով լինին: Այդ նպատակով Գամբէտտան պահանջում է փոփոխելու ընտրութեան եղանակը և ծերակոյտի իրաւունքները. սկզբումը ազգային ժողովից մինչև մահը ընտրուած ծերակոյտի անդամները պէտք է կոնգրէսով նոր ընտրութեան ենթարկուին: Յետոյ պահանջում է Գամբէտտան կրթութեան ազատութեան զարգացում և կատարեալ ազատութիւն ընկերութիւնների:

Վերջումը Գամբէտտան իւր քաղաքական ատեանում հետևեալին է հասնում. 1) մասամբ սահմանադրութեան վերանորոգութիւն, մանաւանդ ծերակոյտի վերաբերմամբ. 2) կազմել մի մեծամասնութիւն, որի մէջ Ֆրանսիան ճիշտ ներկայացրած է. 3) վերակազմութիւն և յարգանք վարչական իշխանութեան իրաւունքների առաջ: Ֆրանսիան այս և այլ խնդիրները կը լուծէ, որովհետև նա ժողովրդական է: Խօսելով ընտրութեան պայքարի վերայ Գամբէտտան ասում էր—ինչպիսի հետևանք էլ որ ունենայ նա, ոչ ոք չէ մտածում նրան ընդդիմութիւն անելու. որտեղ տիրում է բաժանումը, այնտեղ նա կը լինի նախանձող պարտաւորութեան համար և ոչ թէ իշխանութիւն ձեռք բերելու համար: Գամբէտտան հաւատացնում էր, որ նա բարձրագոյն իշխանութեան չէ ձգտում, ինչպէս երբեմն Լուի Նապոլէոնը:

Ֆրանսիացիները մեծ խօսքեր սիրում են, տարակոյս չը կայ, որ Գամբէտտայի խօսքերը իրենց ազդեցութիւնը կ'ունենան: Բայց պէտք է ասել, որ ծերակոյտի վերանորոգութիւնը առաջին քայլն է դէպի կոնվէնտը: Ճգնաժամին ինչ է նշանակում Ֆրանսիայում կոնվէնտը այդ դեռ թարմ է Եւրոպայի յիշողութեան մէջ: Գամբէտտայի պատուասիրութիւնն է, որ լինելու նոր պատգամաւորների ժողովում ցուցակով ընտրութեան եղանակը մտցնէ, այդ նպատակով նա ծերակոյտին վախեցնում է, եթէ նա խոնարհեցաւ՝ կամենում է ողորմած լինել, եթէ ոչ՝ նա ուզում է արմատից ջնջել նրան:

Մինչև մահը ընտրած ծերակոյտների նոր ընտրութիւններով Գամբէտտան կամենում է, որ ծերակոյտից հեռացնէ իրեն ծերակոյտի չը հաւանած անդամներին: Գամբէտտայի արարմունքների մէջ ամենավտանգաւորն այն է, որ նա ջատագով է ընդհանուրի գոհանալուն, ուրիշի կարծիքների համբերելը և խնայելը պաշտպանում է, ամենալայն հիմունքների վերայ ազատութիւնը գովաբանում է, այն ինչ ինքը իւր կուսակիցներով գործնականապէս մարմնացած անհամբերութիւն, կամակորութիւն է, և բուրբօնի պալատից պաշտօններ որսալը մեծ չափով կատարվում է և այնպիսի բաներ է խոստացվում—պատւոյ լէգիօնի խաչեր և այլն և այլն, որոնց վերայ իշխանութիւն ունի ոչ թէ բուրբօնի պալատը, այլ Էլիզէն, եթէ Ֆրանսիան կառավարուի միացած և սահմանադրական ձևով: Բայց կրկնակի կառավարութիւնը ամեն մի նոր շրջանին, երևոյթին աւելի ազատ երևան է գալիս և հէնց այդ պատճառով ամենքի աչքերը դարձրած են դէպի Տուր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Դուքը Բուլղարիայի սահմանները որոշող պայմանագիր կապեց.

⁂

Իրաւաբաններից մէկը պաշտօնեայ Բլէնին նամակ գրեց, որի մէջ յայտնեց, թէ նա Գարտմանի փաստաբանն է. Նամակի հեղինակը խնդրում է պ. Բլէնին լրագրներից յայտնած պետական քարտուղարի կարծիքը հերքել, որ իբր թէ Գարտմանը կարող է բանտարկվել և Ռուսաստան ինչպէս մարդասպան ուղարկվել. փաստաբանի ասելով այս կարծքի պատճառով էր, որ Գարտմանը Կանադա փախաւ. իսկ այժմ նա խնդրում է, որ պ. Բլէնը հաւատացնէ Գարտմանին, թէ նա չի բանտարկվիլ. Այս նամակի պատասխանի մէջ պ. Բլէնը յօգուտ Գարտմանի պահանջները անամօթ է անուանում, միևնոյն ժամանակ աւելացնում է, որ Գարտմանը Միացեալ-Նահանգներ գալով դեռ ամերիկական քաղաքացի չէ դարձել. Պ. Բլէնի կարծիքով փաստաբանի զարթեցրած խնդիրը միջազգային օրէնսդրութեան է վերաբերում և օրէնքի ու անձնական նշանաւոր իրաւունքների լուրջ գաղափարներն է զարթեցնում. Վերջումը պ. Բլէնը հրաժարվում է այս գործի վերաբերութեամբ նախապէս կառավարութեան վճիռը յայտնելու.

⁂

Կոմս Կօրտիի ծանուցագրին Դրան յայտնած ցանկութեան համար, որ սահմանները որոշելու աշխատանքները յետաձգվէին յոյներին զիջած երկրի երկրորդ մասի յանձնվելուց յետոյ, Ասիմ-փաշան բառաբառ յայտնեց, որ զինուորական պաշտօնեան հեռագրով հարկաւոր հրամանները կը ցրվի և այս խնդիրը կը վճռվի սահմանի յանձնաժողովի եւրոպական անդամների համաձայնութեամբ.

⁂

Այս օրերս փարիզի քաղաքական խորհրդի մէջ մեծ աղմուկ ընկաւ. Անդամներից, մէկը երբեմն կոմունիստ Մարտէնը, որին նախագահն էնդէլ հարցը խօսելու իրաւունքից զրկել է, գոչեց, որ նա նախագահին ապտակ կը տայ և մօտ վազեց, որ իւր սպառնալիքը կատարէր, բայց պաշտօնատարները վրահասան և չը թողին.

⁂

Հօղային օրինագիծը լօրդերի ժողովը ընդունեց երրորդ ընթերցմանը առանց ձայնատւութեան.

⁂

Անգլիական պատգամաւորների ժողովում Իրլանդիայի ստատս-սէկրէտարը Գօնվուղի հարցին պատասխանելով՝ բացատրեց, որ իրլանդական պատգամաւոր Դիլլօնի ազատելը նրա հիւանդութեան պատճառով եղաւ. Գլադստօնը Լաբուշէրին պատասխանելով՝ ասաց, որ եթէ Բրէդլօն և հետևեալ նստին պատգամաւորների ժողովում չի ընդունվիլ՝ այն ժամանակ կառավարութիւնը այս խնդրով կը զբաղվի նրա վերջնականապէս վճռելու համար.

⁂

«Germania» լրագիրը հաղորդում է, որ Միւնխէնում լինելիք աւստրիական կայսեր և բաւարական, սաքսօնական և Վիրտէմբէրգի թագաւորների տեսակցութիւնը Բաղէնի դքսին արքայական տիտղոս տալու նպատակով էր, այս վերջինիս առաջիկայ (սեպտ. 20-ին) արծաթեայ հարսանիքը տօնելու պատճառով: Ի հարկէ այս Վիլհէլմ կայսեր համաձայնութեամբ է, որ, ինչպէս ասում են, Գաշտէյնում պայմանագրվեցաւ.

⁂

Օգոստոսի 7-ին Պէշտում մեծ ժողով եղաւ ապաստանի իրաւունքը ոչնչացնելու դէմ բողոքելու համար, որովհետև ասում են, որ կառավարութիւնը ռուս գաղթական Նէմիրովսկուն կը մատնէ. Վերջումը առաջարկութիւն եղաւ, որ պահանջում էր, որ ժողովը իրան համերաշխ հրատարակէր միջազգային յեղափոխականների ուղղութեան հետ, և որ նա բողոքէր հալածանքի և այդպիսի անձանց յանձնելու դէմ. Ոստիկանական կառավարութեան ներկայացուցիչը այս առաջարկութիւնը քուէարկելու չը թողեց և սրա համար էլ ճառախօսների (մեծ մասամբ մշակ դասից) ճառերից յետ վճռվեցաւ Նէմիրովսկուն յանձնելու դէմ բողոքել և նրա ազատութիւնը պահանջել.

⁂

Իտալիայի Հումբէրտ թագաւորը յանձնարարեց տեղեկանալու աւստրիական կայսր Ֆրանց-Իօսիֆից թէ՝ արդեօք նրան հաճելի կը լինի կայսեր հետ Իշլում տեսակցելու. Կայսրը պատասխանեց, որ նրան ամեն տեղ հաճելի կը լինի Իտալիայի թագաւորին հանդիպելու համար.

«ՄԵՂՈՒԻ» ՀԵՌԱԳԻՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԻՐԺԱ
7-ին օգոստոսի.

Արք. բանկ. 1-ին	96	—
— — 2-րդ	94	37
— — 3-րդ	94	75
— — 4-րդ	94	75
Վիճակահ. 1-ին	230	—
— — 2-րդ	228	25
Արև. փոխառ. 1-ին	91	37
» » 2-րդ	91	37
» » 3-րդ	91	37
Լօնդօն	25	75
Համբուրգ	220	50
Փարիզ	271	50
Ոսկի	7ռ.	78 կ.

Բիրժայի վիճակը ամուր է:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԿԱՐՋԱԽԻՑ մեզ գրում են.—Եկեղեցապատկան կալուածոց արդիւնքներն են ներկայ տարումը. 1) Գեօկ-դաղ անուանեալ լեռների մի մասից, որը վաճառուած է սուլդայի Թորոս Թօրօյեանցին, 1100 ռ. երրորդ մասից, որ տրուած է կարգախցոց 1000 ռ.. 2) Բօզալ և Ղատանայ աւերակներից, որոնք տրուած են սուլդացիներին, 1450 ռ.. Այդ գիւղի $^2/_3$ բաժինից եկեղեցին ստանալու է 350 ռ.. 3) կարգախի շրջակայ չայիրները 600 ռ.. 4) Կիլերթա աւերակից 60 ռ. փող և 60 սոմաւ հաց կէսը ցորեն և կէսը գարի. 5) Քէսիկղայան աւերակից և Ղազախի քաղօններից, որոնք գաղէշցիներին են տրուած, 250 ռ.. 6) Խաւէտ գիւղի ձմերանոցից 100 ռ.. 7) Աբլախ աւերակից 80 ռ.. Բացի սոցանից եկեղեցին ստանալու է ա.) արօս, ուշաֆ խոտերի բարդամները, բ.) կթան կովերի իւղերը, գ.) հայերի բահրաները, դ.) ջրաղացների և բանջարանոցների քեօտէնները.

Յոյս ունինք, որ եկեղեցական այդ գիւղերի կառավարիչները ժամանակին մանրամասն հաշիւ կը ներկայացնեն ինչպէս հոգևոր իշխանութեանը, նոյնպէս և հայ հասարակութեանը պարբերական թերթերի և «Արարատ» ամսագրի միջոցաւ.

⁂

ԽԱՒԷՏԻՑ մեզ գրում են.

—Հաշտարար միջնորդը օգոստոսի 10-ին գալու է հողաբաժնի գործը եկեղեցական գիւղերումը չարունակելու համար. Եկեղեցու կողմից այս տարի հաւատարմատար նշանակուած է արժ. Խորէն աւագ քահանայ Բարսեղեանցը. Իսկ անցեալ տարվայ հաւատարմատար պ. Կարապետ Շահնազարեանցը հեռացած է.

⁂

«Тифл. Объявл.» լրագիրը լսել է, որ ներկայ թւի հոկտեմբերի 1-ից Թիֆլիսում կը հրատարակվի մի ամենօրեայ լրագիր «День» (Օր) անունով. Նոյն լրագիրը նոյնպէս լսել է, որ դեկտեմբերի 1-ից մտադրութիւն կայ մի ուրիշ լրագրի հրատարակութիւնը «Свѣтъ» (Լոյս) վերնագրով, շաբաթը երեք անգամ պ. Ն. Պլատոնովի խմբագրութեամբ.

⁂

Լագօդեխում Սղնախից ստացած սուրհանդակի պարկում պակաս է երեւացել 4000 ռուբլի, չը նայելով, որ արտաքին պարկը բոլորովին ամբողջ էր, բայց ներքին պարկն, որ բովանդակում էր դրամական ծրարները բացված էր.

⁂

«Тифл. Объявл.». գրում են ՍՂՆԱԽԻՑ.

—Սղնախի գաւառի Նօվօ-Միխայլօվսկ գիւղից մի զինուոր Կիրիլօ Լըկօվ գնում է ձուկ որսալու էլ յետ չէ դառնում. Հետազօտելուց յետ գտնում են նորա ձեռքի ու ոտքի ոսկրներն, նոյնպէս չորն ու դաշոյնը. Սրանից հետևացնում են, որ նրան պատառել են քաւթարքունները (չախկալ), որոնք շատ են այդ տեղերում.

⁂

Քանի անգամ «Մեղուի» մէջ յիշած ենք Բեթղեհէմի կօյուղիի աննախանձելի վիճակի և նորա պատճառած վնասների մասին. Վերջապէս քաղաքային վարչութիւնն ուշք դարձնելով Բեթղեհէմի թաղի բնակչաց տրտունջների վերայ՝ ձեռնարկեց շինել տալու յիշեալ կօյուղին, բայց դժբաղդաբար կապալով տալով շինութիւնն, երևի վերահսկողութիւն չէ արած նորա վերայ, ուստի և անցեալ ամսի 15-ին տեղի ունեցած մեծ հեղեղի ժամանակ նորաշէն կոյուղին անհաստատ և վատ շինած լինելու պատճառով շատ տեղերում վնասվել է. Ցանկալի է, որ այդպիսի շինութեանց ժամանակ քաղաքային վարչութիւնը խիստ հսկողութիւն ունենայ կապալառուների վերայ, որպէս զի հարկ չը լինի միշտ այդպիսի շինութեանց վերայ ի զուր դրամ ծախսել և էլի քաղաքի բարեկարգութեան չը հասնել ու բնակիչների առողջութեան էլ վնասել.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգի ռուս շէքսպիրագէտներից մէկը, որ մի քանի տարի արդէն զբաղուած է Շէքսպիրի կրիտիկական քննութեամբ հոգեբանական տեսակէտից, դիտաւորութիւն ունի ապացուցանելու, որ Շէքսպիրը հոգեբանապէս հիւանդ մարդ էր և թէ հէնց սրա մէջն է կայանում Շէքսպիրի ստեղծագործութեանց բոլոր յաջողութիւնը. Ռուս շէքսպիրագէտից առաջ անցաւ սակայն բժ. Գիրշֆէլդը, որ սկսել է հրատարակել գերմաներէն լեզւով մի շարք քննութիւններ Շէքսպիրի մասին նոյնպէս հոգեբանական տեսակէտից. Այս օրերս դուրս եկաւ առաջին մօնօգրաֆիան, Օֆէլիան, որի մէջ կրիտիկ-հոգեբանը աշխատում է գիտութեան ձեռք բերած փաստերի հիման վերայ և օրինակներով ապացուցանել, որ Համլէտի շատ տեսարաններ, Օֆէլիայի բերանի մէջ դրած շատ խօսքեր պարզ ապացուցանում են, որ Շէքսպիրը առողջ մտքի վերայ չէր, երբ «Համլէտն» էր գրում. Հեղինակը խոստանում է իր հետևեալ մօնօգրաֆիաներում ապացուցանել, որ և Շէքսպիրի միւս հեղինակութիւններն էլ հոգեբանապէս-հիւանդ մարդու արդասիք են և որ Շէքսպիրի տիպերի ազդեցութիւնը հոգեբանապէս ոչ-բոլորովին առողջ, ջղային դիւրագրգիռ մարդկանց համար շատ վնասակար է. (Новости).

⁂

Ախէնի ամերիկական հիւպատոսը հետևեալ կերպով է գնահատում Գերմանիայից Միացեալ Նահանգները գաղթականութեան նշանակութիւնը. 1820—1880 թ. Նիւ-Եօրկ եկել է մօտ 11 միլիօն գաղթական. որոնից 3 միլ. գերմանական ազգութեան են պատկանում. այս թիւը գերազանցում է Ամերիկայի անկախութեան պատերազմի վերջում եղած ազգաբնակութիւնից. 1794 թ. Ամերիկա տեղափոխվեցան 6000 գաղթականներ, 1881թ. շատ հաւանական է գաղթականների թիւը կը կազմի կէս միլիօնին մօտ. Այս բոլորը մտնում է Միացեալ-Նահանգների գործարանները, արհեստանոցները և ագարակները, իբրև կարևոր աշխատաւոր ուժեր, ամբողջութեամբ և աշխատանքով ապրուստ հայթհայթելու. Մեծամասնութիւնը ընտիր մշակներ են. Բացի գիւղատնտեսական, տէխնիկական, արդիւնաբերող գիտութիւնից՝ իրանց հետ բերում են միջին հաշւով 70 դոլլար. Այսպէս ուրեմն Գերմանիան զրկվում է 200,000 աշխատասէր քաղաքացիներից, իսկ Ամերիկան ոչ թէ միայն ձեռք է բերում նրանց, այլ և նրանց հետ և 14 միլ. դոլլար, որոնք առևտրական շրջանի մէջ են մտնում. Բայց պէտք է և մի հանգամանք էլ աչքի առաջ ունենալ, որ նոյնքան նշանաւոր է որքան է առաջինները. Իւրաքանչիւր առողջ և աշխատասէր գաղթական իր նոր հայրենիքի հարստութեանը աւելացնում է 1000 դոլլար, այնպէս որ վերջումը Գերմանիան կորցնում է, իսկ Ամերիկան շահում է 200,000 թանգագին քաղաքացին, երևի 14 միլ. դոլլար առձեռն դրամ և 200 միլլօն դոլլար՝ իբրև այս մարդկանց աշխատանքի ույժը և հմտութիւնը.

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 8-го Августа 1881 г.
Типографія М. Ротинянцъ и К.
Տուն բժշկապետ Մ. Ռոտինեանց.